ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

**MINISTER**

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**МИНИСТР**

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 501
🖷 (374 11) 818 506

№____________________

«____» «____________»2016 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
պարոն Ա. Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան Ձեր 15.03.2016թ. N 02/08/490-16 գրության հայտնում եմ, որ <<Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ իրականացնող ընկերությանը բնապահպանական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ մեր դիրքորոշումը Ձեզ է ներկայացվել 29.02.16թ. N 1/18/10365-16 գրությամբ: Ձեր կողմից ներկայացված օրենքի նախագծի լրամշակված տարբերակում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կատարված առաջարկություններն ամբողջությամբ ներառված չեն: Ուստի ՀՀ բնապահպանության նախարարությունը մնում է նախկին կարծիքին:

Կից ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ իրականացնող ընկերությանը բնապահպանական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Ա. Գրիգորյան

Գ.Մանուչարյան
011 818 521
Խ.Խաչատրյան
011 818 536
Վ. Դավթյան
011 818 547

# ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ իրականացնող ընկերությանը բնապահպանական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին»**
Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.«Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ իրականացնող ընկերությանը բնապահպանական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի (այսուհետ՝ Օրենք) ներկայացված խմբագրությամբ ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ կառաջանան: Ընդունման դեպքում Օրենքը գործելու է առնվազն 15 տարի և վերաբերում է հանրապետության ողջ տարածքին և լուրջ խոչնդոտ կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում կոյուղաջրերի մաքրման և մակերևութային ջրերի որակի բարելավման համար: («Երևանջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռիջրմուղկոյուղի», «Շիրակջրմուղկոյուղի», «Նորակունք» ՓԲԸ կողմից առանց մաքրման կեղտաջրերով ջրային ռեսուրսներն աղտոտելու հետևանքով հասցված վնասը ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2003թ. N 1110-Ն որոշմամբ հաստատված կարգով տարեկան կտրվածքով կազմում է 741 մլն. դրամ:)

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին առնչվում է և ընդունման դեպքում այն կհակասի ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին, քանի որ ջրային ռեսուրսները կշարունակեն աղտոտվել արտադրական և կոմունալ - կենցաղային կեղտաջրերով:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտություն կա: